

2010

2002

407
ՄՅ-71

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Ս.Ո.Ս.ՆՅ ՈՒՍՈՒՑՁԻ

Կարդալ սովորելու համար

94 Պ Ա Տ Կ Ե Ր Ո Վ

ՅՈՐԻՆԵՑ

ՅՈՎ. ՏԷՐ ՄԻՐՍԻԲԱՆՅ

ԳԻՆ Է 35 Կ.

Ով կը կարդայ,
նա մարդ ա:
(առած):



Տ-46

ՀՄ

Կ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Ա.Ռ.Ա.ՆՅ ՈՒՍՈՒՑՉԻ

Կարգալ սովորելու համար

103 Պ Ա Տ Կ Ե Ր Ո Վ


ՅՕԻՆԵՑ

ՅՈՎ. ՏԷՐ ՄԻՐԱՔԵԱՆՑ.

1007
31477

3625

Ով կը կարգալ,
նա մարդ ա:
(առած):



ԱԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԱԿՆԵՐ
Гос. Публ. Библиотека
— ССРМ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՆԱՆ.
ՈՒՆ Ա. ԶԱՍԻՆԵՆ ԵՒ Վ. ԲՐՈՒՆ.
1897.

12413

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԱՆԴՐԱԳԵՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ:

Մեր խնդրով հետաքրքրուողներին եւ այս այրբենարանի նպատակա-
յարմար գործադրելուն նպատակներին ցանկացանք մի քանի բացատրու-
թիւններ տալ, պարզել այս գրքոյը կազմելուց առաջ եւ մեր աշխատու-
թեան ընթացքում մեզ զբաղեցնող մտքերը: Ապա հարկ զգացինք մասնա-
նիշ լինել այն մի քանի ցուցմունքների վրայ, որոնցով պէտք է սովորեցնել
անգրագէտին սգուտ քաղել այս ձեւնարկից: Այս գործին առանձնայա ոռւկ
պայմանների շնորհիւ հարկադրուեցինք սովորականից աւելի ընդարձակ յա-
ռաջարան գրել:

Ինչպէս ձեւնարկիս խորագիրը ցոյց է տալիս, նա առանց ուսուցչի
օգնութեան՝ անգրագէտին կարգալ ուսուցանելու նպատակն ունի: Անգրա-
գէտին պարբերաբար միայն մի քանի ցուցմունքներ պէտք է անել՝ ինքնու-
րոյն կերպով յառաջ գնալու համար: Ներկայ գրքոյը յօրինուած է բոլորո-
վին անգրագէտ եւ ոչ մի ժամանակ գիր չճանաչած մարդկանց ՚ի նկատի ու-
նենալով: Պարզ է, որ եթէ ձեւնարկս իւր դժուարագոյն նպատակին հաս-
նել կարողանայ, երբ եւ իցէ այս կամ այն բաժով բիտեցածներին նա ինքն
ըստ ինքեան պիտի կարողանայ աւելի դիւրաւ առաջնորդել:

Մի այս պիտի այրբենարան յօրինելը վաղուց անցել էր մեր մտքից,
բայց ՚ի նկատի ունենալով զգալի դժուարութիւնները, եւ մանկավարժական
գրականութեան մէջ չճանաչելով այս նպատակին ուղղակի ծառայող ձեւ-
նարկներ, ետածգել էինք մեր դիտարորութիւնը: Վերջապէս այս տարի
վճռեցինք փորձել եւ միեւնոյն ժամանակ շատ քիչ յոյս ունենալով հան-
դերձ՝ դիմել մանկավարժական կենտրոնին օգնութիւն խնդրելու: Հեղինա-
կաւոր մարդիկ պատասխանեցին, որ իրանց էլ յայտնի չէ մի այդպիսի թէ-
րիա: Այնուհետեւ ապահինելով հոգեբանական ու մանկավարժական ընդհա-
նուր օրէնքներին՝ աշխատեցինք մեր առաջադրեալ մասնաւոր նպատակի հա-
մար կանոններ ստիմանել, գործառնութեանց նախագիծ կազմել եւ հետըզ-
հետէ փորձեր անել: Ընտրեցինք հինգ մարդ՝ 35—50 տարեկան եւ հե-
տեւեալ փորձերի հետեւանքները տեղնուտողը սկսեցինք արձանագրել:

ա. Փոխանակ ժամանակակից մեթօդով նախադասութիւնները բառերի,
բառերը վանկերի, վանկերը հնչիւնների վերածելու՝ վեր էինք առնում՝ իւրա-
քանչիւր հնչիւնի մասին գաղափար տալու համար՝ առ նուազը երեք ժո-
ղովրդին ըստ ծանօթ առարկաների անուններ (Թանձրացեալ գոյականներ *):
Դեռ պատկերներ չունենալով՝ հարկադրուած էինք առ ժամանակ արտա-
սանել այս օրինակելի բառերը: Աշխատեցինք, որքան հնարաւոր էր, ընտրել

* Մեր նպատակին ծառայող բառերի մէջ խորութիւն չէինք, դնում, եթէ ուռւտ.
ընել կամ թուրքերէնը միայն կամ տեւի ծանօթ ու գործածական էինք համարում:
Բայց աշխատեցինք, որքան մեզ հնարաւոր եղաւ՝ գէթ կովկասեան գաւառներ.
րում նոյն կերպով արտասանուող սկզբնատառերով հայերէններն ընտրել:

Дозволено цензурою. 29 Апрель 1896 года, Тифлисъ.



այնպիսի բաւեր, որոնց *երկարոյ* հնչիւնները տարրեր էին: Թէ՛ ձայնաւորներով եւ Թէ՛ բաղձայններով սկսուող բառերի առաջին հնչիւնները շատ հեշտութեամբ որոշում էին եւ զուտ արտասանում՝ նախ միայն ինձ Թագուն ասելով: Վերջը, Թէևն առժամանակ հարկաւոր չէր, փորձի համար տուի բաղձայնների կուտակումներով հրեշտակ, ձմերուկ, զմուռ, ֆուջա եւ մկրատ բառերը եւ համոզուեցի, որ աշակերտներիցս 2—3 միշտ գտնում էին:

բ. Այս փորձերն անելուց յետոյ էր, որ մտածեցի այդ օրինակելի բառերի տակը շարել նոյն թաւերով նաեւ վերջաւորուած այլ օրինակելի բառեր: Այսպիսով ասելի պիտի դիւրանար մանաւանդ երեքից պակաս օրինակելի բառեր ունեցող հնչիւնների սովորցնելու գործը: Այս վերջին կարգի բառերն ընտրելիս անտես առինք այն հանգամանքը, որ օրինակ՝ արջ, աչք բառերի սկիզբը զանազան գառառներում տարբեր կերպով է արտասանուում՝ որովհետեւ այդ չի խանգարիլ վերջին հնչիւնը պարզ ըմբռնել:

գ. Մի հնչիւն գտնելուց յետոյ՝ առանց դժուարութեան նաեւ իմանում էին, Թէ՛ նա քանի անգամ կրկնուում է որ եւ է բառի մէջ:

դ. Մի քանի տաւեր ճանաչել տալուց յետոյ՝ կազմեցինք նրանցից նախ միավանկ բառեր՝ աս, ոս, ում, սոս, ապա ասելի յառաջ գնալով՝ երկավանկ եւ այլն: Այս էլ դիւրութեամբ ու մեծ հասոյքով անում էին մեր հասակաւոր աշակերտները: Միայն մի անխուսափելի խանգարումնք առաջացաւ, երբ բաղձայն տաւը առանձին հնչել տալիս՝ չ հնչիւնը մէջ ընկաւ, բայց երբ եւ միանգամ կտրուկ (իրանց լեզուով քեակին) արտասանելու օրինակը տուի, մեր գործն իսկոյն շիտկուեց:

ե. Որովհետեւ *ս* ^{*)}, *բ*, եւ *յ* տաւերով սկսուող նպատակայարմար բառեր չկային, իսկ է, *բ*, *ժ*, *ց*, *ո*, *ջ*, եւ *ւ*-ով հազիւ մի մի հատ, ուստի փորձեցի սրանցից իւրաքանչիւրը մէկ պարզ նախադասութեան մէջ դնել՝ իբրեւ գտանելի անյայտ: Համոզուեցի, որ եթէ օրինակ «նա առաջ փախա» ասենք, իսկոյն կը գտնեն *ւ* պակասորդը, իսկ եթէ «մատնոցը կուս» ասենք, նրանք կ'գտնեն *բ*: Հնգից միայն մէկը քիչ դժուարանում էր: Յետոյ մտածեցի, որ առանձնապէս դժուարացողների համար ասելի լաւ էր դնել ժողովրդին քաջ յայտնի առածներ, մի քանի Թէևն գրաբար աղօթքներ ու եկեղ երգեր, ապա նաեւ ժողովրդական երգեր: Ասելի դժուար էր *ս* եւ մանաւանդ *յ* հնչիւնների տարբեր գործածութիւնները հասկացնելը: Իւրաքանչիւր դէպքի համար դրինք նաեւ մի հակիրճ ու պարզ կանոն եւ անմիջապէս, եթէ կար, նոյն տաւով սկսուող բառի պատկերը: Պատկերներ չունեցող *ոյ*, *էյ*, *իյ*... կամ *յօ*, *յէ*, *յն*... սկիզբ ունեցող բառերի գոնէ մի մի անգամ արտասանելը առաջնորդողի կողմից կարող էր շատ սովորողներին հեւտն պահել դժուարութիւններից:

Մենք Թէևն սկզբունքով ընդհանրապէս համամիտ չենք արուեստական միջոցներով, ինչպէս՝ առածներով, ծանօթ ոտանաւորներով... կարդալու գործը շատ Թէևնեացնելու ձգտմանը, որոնք ուսուցչով առաջնորդուող

^{*)} Այս ա. գրքուս հարկ զգացինք *ւ* — ի ընդարձակ գործածութեանը դիմելու: Երբ *բ*. գրքում գրութեան հետ կոտմք նաեւ կարեւորագոյն ուղղագրական կանոնները, կ'զարդենք նոյնպէս *ւ*, *վ*, *ու* հնչիւնների գործածութիւնը:

մտնկանը կարող են խանգարել գնտակցարար եւ ինքնուրոյն կերպով կարդալ սովորելը, սակայն ամեն՝ քայլա իոխում օգնականից զուրկ հասակաւորին կ'օրհնար՝ համարեցինք այդ: Այստեղ խնդիրն իսկապէս ոչ Թէ կապելու, այլ պակաս մնայած հնչիւնների եւ նրանց բարդութեանց ճանաչելու վրայ է, իսկ այն վարժութիւններն արդէն անցած կը լինին մեծ քանակութեամբ բառերի եւ նախադասութեանց շարքերում: Կարելի էր շատ ասելի քանակութեամբ նախադասութիւններ կազմել, եթէ մանաւանդ է եւ յ տաւերի ետանան արգելք չը լինէր:

Երգերը ^{*)} դիւրամբ ասելի մեծ քանակութեամբ ենք ընտրել, որ իւրաքանչիւր կարդացողին նրանցից գոնէ մի քանիսը ծանօթ լինէին:

Վերջապէս դրել ենք նաեւ անեկղումներ ու մի ընդարձակ նկարագրութիւն, որ մեր կարդացողների հասողութեանը մօտեցնելու համար՝ ինչ ինչ փոփոխութեանց ենթարկեցինք:

Արդ՝ գալով անգրագէտ սովորողին վերաբերեալ ցուցմունքներին՝ Յետեւանները պէտք է լինեն.

- ա. *Տէ՛ս, ամեն պատկերի կողքում գրուած խօսքը նորս ակունկն է.*
- բ. *Առաջ սովորի՛ր ամեն մի խօսքի առջի եւ վերջի չոկ գրած գրերը:*
- գ. *ս գիրը սովորելուց կու՛ն կայե՛ իրար իմ գրուած գրերը եւ կարդա՛ ս, սս, ու, ուս, . . .*
- դ. *էպոէս էլ կայե՛ խօսքի կողքերը սօ կօ, սօխօ, ստ ամ, ստամ. . . .*
- ե. *Տէ՛ս բեւ պատկերը, նորս մօտ գրուած է «և» կարդա եւ, ուղում է ասել՝ և գիրը երկու գրի մէկ է հանում:*

՚ի հարկէ, անյարմար է եւ պէտք չկայ միանգամից այս հինգ ցուցմունքներն անելու. նախ հարկաւոր է ա. եւ բ. կէտերը երկուրդ անգամ գ. կէտը, երրորդ անգամ դ. եւ վերջերը ե. կէտը բացառել:

Թէ որքան յարմար է այս մեթօդը նաեւ կիրակնօրեայ ուսումնարաններին, այդ կարծում ենք ինքն ըստ ինքեան պարզ է: Այս առթիւ բանալով մեր յուշատետրը՝ քաղեցինք Զմիւռնիայում մեր կիրակնօրեայ ուսումնարանական զբաղմանց մասին ՚ի միջի այլոց հետեւեալը. «Իսպախանքների դատողութեան ասելի զարգացած լինելը շատ է դիւրացնում գիտակցաբար կարդալու գործը: Երանք մեծ ոգեւորութեամբ սկսեցին եւ «Աստուած մըր միլլամ պախա՛ նրանք մեծ ոգեւորութեամբ արտասանութիւն ստացած դուրս եկան, շատ արագ յառաջադիմեցին, ուժերորդ կիւրակին սկսեցին «Մայրենի լեզու» ա. գրքի առաջի վարժութիւնները, սակայն իրանցից անկախ հանգամանքաւ գրքի առաջի վարժութիւնները, սակայն իրանցից անկախ հանգամանքներ, հոգսեր, վշտեր, շատ խանգարում էին այս խեղճ բեռնակիրների զբաղմունքների նոյն իսկ կիրակի օրերը: Նշանց «Իսպախ» սկսեց փախ-

^{*)} Ի դէպս այստեղ պէտք է յիշել, որ ընտրածներս մէջ բացի «Քնար Հայկ» եւ աշուղ Զիլանու երգերից՝ ուժեղ պ. Արշակ Մրտեանի գնահատելի «Սամկալան մրտնջներին» է, որ նա ժողովել է Երզնկից ու այս տարի հրատարակել Ալէք. սանդրապովում: Մենք իբրեւ նմուշ վեր առանք շատերի միայն սկիզբը: Մեր ժողովրդական տաղանքի հիմնալի մարգարտաշարքեր կան այդ գրքիսկի մէջ որի գինը 40 կ. է.

ներ : եթէ ներկայ ձեռնարկի ձեռով պատկերաչարդ առաջնորդ ունենային, մուսացածները կարող կլինէին տանը մտաբերել :

Թէեւ դժուար չէր մի սժաւանակ նաեւ ձեռագիրեր տալ, սակայն տպագրական անյարմարութեանց պատճառով այդ վերապահեցինք շ. մասին :

Ոչ միայն սիրով կընդունեմ լայր քննադատութիւնները, այլեւ մասնաւորապէս խնդրում եմ որ մանասանդ այս ձեռնարկով փորձ անողները հրապարակաւ կամ այլ կերպով ինձ հաղորդեն յաջողութեան եւ անյաջողութեան մասնաւոր կամ ընդհանուր դէպքերը, միայն թէ՛ պայմանների որոշ նկարագրութեամբ հանդերձ աւելի շահեկան կը լինէր :

17 Ապրիլի, 1896.
Ալէքսանդրապոլ :

Յ. Տ. Մ.




1	2	3	4	5	6
I	II	III	IIII	IIIII	IIIIII
7	8	9	10		
				IIIIIIII	IIIIIIIIII
		11		12	
			IIIIIIIIII	IIIIIIIIIIII	


տ



տ լեղ



տ ծըխ



տ զէս




եօնճ տ

ու

ու խը

8



ու յազ



ու Լ



կատ ու




լեղ ու


օ



օ ճ



օ Ղ



օ Ջաղ


մ



մ առ



մ ուկ




մ կրատ



ժա մ

ս

ս անտր



ս ռխ



ս ունկ



չոր ս


4

ա, աս: ա, աս, մաս: ու, ում: ու, ում, սում:


ու, ուս: ու, ուս, սուս:

կ


կ շեւք




կ տուց



կ ացին



դանա կ




ու, ուս, կու, կուս: ու, ուկ, մու, մուկ: ու, ում, կու, կում:

աս, մաս, ում, ուս, կուս, մուկ, կում, սուս, ում:

խ

խ աջ



խ ուփ



խ ոփ



բե խ




ա, ախ: ա, ախ, կա, կախ: ա, ախ: ա, ախ,
խա, խախ: ա, ախ: ա, ախ, խախ: ու, ուխ,
խուխ: ա, աա, խաա:


աա, կախ, կուխ, մաա, սուխ, խախ, մուխ,
ուխ, խախ, կուս, ուս, խուխ, խաա, սուս:

ճ


ճ ի




ճ ուկ



ճ եռք



բար ճ



ա, ախ, ճա, ճախ: ու, ուկ, ճուկ:
աա, կախ, սուս, ճախ, խուխ, կուխ, կուս, ճուկ,
մաա, ուս, խաա, մուխ, խախ, ուխ, սուխ:

տ


տ ուն



տ սոր

10

տ իկ



Կոր տ




ա, առ, մատ: ա, ալ, տակ: ա, աս, տաս:
ա, ամ, տամ:


խում, ճախ, կախ, սուս, աս, մատ, մաս,
կուս, կում, տակ, ում, խամ, խաս, ուս,
տաս, տամ:

ն

ն ալ



ն ուռ



ն շխարք



բերա ն



ա, ան: ա, նա: ա, ան, սան: ու, ուն, սուն,
ու, ուն, ճուն: ու, ուն, տուն: ա, ան, տան,
ա, ան, ման: ա, ան, կա, կան: ա, ան, խա,
խան: օ, օն, փոխ

3625
1007
31474

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

տամ, սում, ան, տաս, նա, մուկ, ուս, սան,
խաս սուն, խամ, ճուն, ում, տուն: տակ,
կում, ման, կուս, կան, ճուկ, խան, մաս,
տոն, մատ, աս, խում, ճախ, կախ:

թ

թ ադ



թ եւ



թ ի



քի թ



ա, ան, թա, թան, ու, ութ: ու, ութ, թութ:
կում, սան, տակ, ում, սուն, թան, ճուն,


խամ, սուն, խաս, տան, ուս, նա, տաս, ան,
տամ, թութ, կախ, ճուկ, խում, աս, մատ,
տոն, ճախ, մաս, խան, կան, կուս, ման, մուկ:

շ

շ ուն



շ սքոր



շ երեկ



ու, ուն, շուն: ա, ան, շան: ու, ուտ, շուտ:
ու, ուշ, նուշ: ու, ուշ, տուշ: ու, ուշ, թուշ:

գ

գ իրք



գ ուղկայ



գ լուխ



հին գ


5

ու, ուշ, գու, գուշ: ա, ագ, թա, թագ:
ա, ամ, գա, գամ: ու, գու, գուն: ա, ան,
գան: ա, աս, գաս: ա, գա, աթա, գա թա,
գաթա: ու, գու, գուն, գունտ:


տան, շուն, գուշ, տակ, տամ, թուլթ, տաս,
թագ, շուտ, կուս, ման, գամ, խաս, սան,
նա, գուն, կան, ճուկ, խան, գաս, սուն,
թուշ, ճուն, թան, ում, տուն. նուշ, գաթա,
գունտ:

ք

ք ար



ք ուռակ



ճեռ ք



ու, քու: ու, ուն, քուն:
սուն, գունտ, խան, շուն, թուլթ, սուն, քու,

նուշ, թուշ, թան, խաս, գուն, թագ, կուս, սան, ճուն, գամ, քուն, խան:

սօ կօ, սօկօ: ա տամ, ատամ: տախ տակ, տախտակ: ու սում, ուսում: կա տու, կատու: ա նուն, անուն:

զ

զ անգ



զ ծնթիկ



զ նճիլ



խ սղ



ու, ուզ, թուզ: ա, ազ, սա, սազ, սա, սազ: ա, ազ, խա, խազ:

ա, ազ, գա, գազ: ա, ազ, նազ, նա: ու, ուտ, զու, զուտ: ա, ան, զան, զանգ: ու, ուզ, տու, տուզ:


խան, գամ, ատամ, գուն, նազ, թութ, կատու, թուզ, նուշ, սազ, թան, խազ, շուտ, գազ, զուտ, զանգ, տուզ:

փ


փ երկեալ




փ օստ



փ ուքս



խու փ



ա, ախ, փակ: ու, ուփ, տու, տուփ: ու, ուփ, թու, թուփ: ու, ուփ, խու, խուփ: օ, օփ, թօ, թօփ: ու, ուշ, փու, փուշ: ու, ուք,


փուլ, ուքս, փուլքս: օ, օս, օստ, փօստ, ա, ատ,
շատ, փշա, փշատ:

շատ փշատ տու:


քուն, թօփ, ուսում, գաթա, տախտակ, ա-
տամ, ծունկ, կատու, ծոմ, գաթա, սօկօ,
թագ, փակ, գունտ, տուփ, թուփ, փուքս,
անուն, խուփ, փօստ, փշատ, փուշ: գազ, նազ,
տուզ, գուտ:

չ որս

4



չ ատր




չ իվի

ա, ամ, չա, չամ: ու, ուչ, քու քուչ:
ու, ութ, չու, չութ: ու, ուս, ուտ, չուտ:
ան, անձ: ան, անձ, տանձ: ու, ուն, նուն,
ա նուն, անուն: ան, ման, նմա, նման:

ֆ

ֆ այտօն



ֆ ոչա




ֆ իւ




ու, ուն, ունտ, ֆունտ: ֆու թա, ֆութա:
տանձ, չամ, անուն, քուչ, ֆունտ, նման,
չութ, ֆութա, չուտ, թուզ, զանգ:


ռ



նուռ ռ



ֆանեա ռ



թօ ռ

առ, օռ, թօռ: ուռ, ուս, ուսա: օմ, ում:
առ, թառ: ուռ, ուռի, թուռ, թուռի:
առ, առչ, փառչ: ճա, առ, դառ, ճա դառ,

ճագառ: քռ, աղ, ուսղ, քռ ուսղ, քռուսղ:
ուռ, մուռ, զմուռ, զմուռ:

չուստ, զմուռ, ֆութա, քռուսղ, չութ,
ճագառ, փառչ, ֆունտ, թուռի, ում, չամ
տանձ: սաղ:

տասր զանգ առ:

ճ


ճ անճ



ճ րազ




կո ճ




ան, ճա, ճան: ան, ճա, ճան, ճանձ: ճան,
ճանձ:


ղ



օ Ղ



ղե Ղ




ղ աղ

օղ, աղ, աղ, մա, մաղ: աղ, ճա, ճաղ: աղ,
 թա, թաղ: աղ, ղա, ղաղ: օղ ահ, օղահ:
 ման գաղ, մանգաղ:
 տանձ, չամ, ճան, թառ, աղ, անուն, ման-
 գաղ, ուօմ, ճանձ, թուռփ, ֆուռտ, թաղ,

փառչ, նման, ճանկ, ճագառ, չութ, օղակ,
 խազ: մա նուկ, մանուկ: ան տոն, անտոն:
 խաշ խաշ, խաշխաշ:
 գնա, կուգամ տուն:


L



L իմոն



L ամու



նա L


նալ, ուլ, լու, ուս, լուս, ռու, լուռ, լամ,
 լաթ, լաք, լաղ, լափ, լճ, լժ, լուծ, ալ,
 լալ, գաղ, դուտ:

ծ

ծ առ



ծ իծ



ա, ամ, ծա, ծամ: ա, աի, ծա, ծաի: ու,
ում, ծու, ծում: ու, ուն, ծու, ծուն, ծունի:
ա, ախ, ծա, ծախ, ծախս: ա, ախ, ծախ,
ծախք:

խազ, շուտ, անուն, ծամ, տօն, գունտ,
ծաի, սազ, թագ, ծաի, սօիօ, գաթա,
ծում, կատու, ձուն, ծունի, ատամ, տախ-
տաի, ծախս, շուն, ուտում, ծախք, քուն,
թուզ, զանգ:

ե

ե զ



ե զն



ե օնճա



եզ, մեղ, մեծ, սեի, սեխ, քեզ, թեղ, ծեփ,
եօն ճա, եօնճա: ե ղօ, եղօ: եռք, ձեռք:

աղ, թուռփ, փառչ, մանուկ, եզ, մեղ,
ճանկ, անտոն, մեծ, ձեռք, եղօ, դամիշ,
խաշխաշ, օղակ, նալ, նուռ, եօնճա, լուռ,
սեխ, լուծ, նազ, լուռ, լուռ:

իմ մեծ օղը առ: մենք ծնող ենք: մենք
ձուկ կուտենք: թթու թան կուզեմ:

ը

ին ը 9

ութ ը 8


տաս ը 10



ը նկուզ

ութը: լի քը լիքը: տա սը, տասը: ըն կուզ,
ընկուզ: եօ թը, եօթը, տուզ:
տասը տախտակ առ: ութը նալ առ:

ի




ձ ի

հայլ ի



գերանդ ի




ձի, ֆիլ, ինը: ա դիք ադիք: տիկ, ծիծ: ղա
միշ, ղամիշ: կա շի, կաշի: թի ալ, թիակ:
մատ նի, մատնի: զօն թիկ, զօնթիկ: ա ծը,
ածը, ածը լի, ածըլի:


ձեռք, ադիք, լիքը, եօնճա, ընկուզ:
ութը ուլ առ ու ինը ձի:
ես մեծ մանգաղ ունիմ: տանը նատի: իմ
ծնողքը օս էն: քու ծնողքը ուռա: իմ գա-
թան տես: տասը նուշ ունիմ:

դ


դ անակ



դ ուռ



դ եղ



դեղ, դաս, դալ, դուռ:

դա նակ, դանակ: դա գաղ, դագաղ:

դա մաղ, դամաղ: մակ, դմակ: դում, դդում:

դու մատնու թանկ ակ ունիս: օսն ու

ուուսը մեծ իշխանի մօտից են գալիս:

քու ճախ ձեռքդ տու: քու խաս տանձի

ճառդ առ:

ց

վե ց

6

կտու ց



խարտո ց



ց սրեն




ցեց, ցեղ, ցան, ցախ, ցած, ցուլ:

կա ցին, կացին: ցօ լակ, ցօլակ: տուց կը-
տուց:

թուլթակը կեռ կտուց ունի: թուը թելից
են շինում: նա ծուեց թթի խաս ծառը:
զմուռը տանից առ:

Ջ

Ջ աղայք



ար Ջ



ական Ջ



Ջիւ, Ջան: Ջա մի, Ջամի: օ Ջաղ, օՋաղ:
անջ, կանջ, ա կանջ, ականջ: ան կած,
անկած:

ցած, ցախ, դադաղ, մածուն, դդում,
կտուց, զոնթիկ, դմակ, կացին, եօնճա,
դեաֆ, ցուլ, դամաղ, ցօլակ, ցեղ, դուռ,
դալ, ցեց, դաս, դեղ:

գնա ջամի: ջան, մի տուղ ունիմ: նա
ականջս կը տանի:

վ

վ եց

6

վ արդ




կօ վ



վեց, վան, վանք, վիզ, չի վի, չիվի, վա նօ,
վանօ, վա նի, վանի, վա սիլ, վասիլ, վա
կաս, վակաս:
վանին զոնթիկ ունի: իմ դեաֆը առ: ութը
չիվի հանեց. վեց նալած ճիանքը առ.
վատ ցեցը մեծ գլուխ ունի:

ժ

կա ժ



բոժո ժ



ժ ամ



կուզ, ժամ, ժախ, ժան, ժանտ, ժա ժիկ,
ժաժիկ, օ ժիտ. օժիտ, մի ա ժում, միա
ժում: Ես միաժում եմ: դու միաժում ես:
նա օժիտ ունի:

հ

հ ըեշտակ



հ աւ



հ ինգ

5

հաց, հազ, հատ, հախ, հալ, հին, հինգ,
հօխա, հօխա, կիհ, սկիհ:

վեց, կուզ, հաց, վան, ժամ, հազ, ջան,
վանք, ժախ, հատ, վիզ, հախ, ցախ չիվի,
ժանտ, հալ, օժիտ, հին, դագաղ, վանօ,
ժամիկ, հինգ, վանի, միաժում, հօխա.
սկանջ, վասիլ, սկիհ, օջաղ, սազ:

Նա դանակ հանեց: ութը չիվի հանեց:
առ աննամ սունկը: հաստ սուն ունիմ:

պ

պ առկեր



պ ոչ



պ եջատ



պատ, պէխ, պապ, պաղ, ա պուշ, ապուշ,
պա պիկ, պապիկ, պա պակ, պապակ, թա
պաղ, թապաղ, պաշ տեւ, պաշտեւ, ճեղ,
պճեղ, տիկ, ստիկ, պստիկ:


պատի մօտ կաց: պատի տակը նստի:

բ


բ երան



բ ուն



բ արձ




բուն, բէխ, բահ, բուկ, բակ, բաղ, բիզ,
բօլ, բիբ, բիծա, բաժին, բաժակ:

հինգ բարձ ունինք: դու վեց բաղ ու-
նիս, ես ինը:


բուն պատին կանգնեց:
մի բաժակ ում առան:
ձագը բնից հանեց:

ր

Թուր




չատր



պատկեր



քար



սար, քար, Թուր, չիր, խիար, ուրագ, գարի, վեղար, վեղար, պատկեր, պատկեր, կա մար, կամար, բե ղան, բերան, պանիր,

պանիր, հե ղուն, հերուն, շե ղեփ, շերեփ, շա քար, շաքար, ծի ղան, ծիրան, եօր ղան, եօրղան, սաղ, զանգ:

վարդ, բարձ, չարխ, գիր, գիրք, սան, սանտ, սանտր, չատր:

գրա կալ, գրակալ, հրեշ տակ, հրեշտակ, նըշ խարք, նըշխարք, մըկ ղաա, մըկրաա:

ինձ տուր հինգ խաչ: տուն բեր վեց բահ:

Ծախիր հրեշտակի պատկերը: դու տանը նստի:

ինչո՞ւ Թանկ ակերդ չը հանեցիր. ձեր ունեցած մեծերը հանիր: վաղը կերթամ սարաֆի մօտ, հատին քսան ղուբլի կը տամ, նրանից կառնեմ:



քամու բերածը քամին կը տանի:
 մի ձեռքը ծափ չի տուլ:
 մեծի ասած, պստիկի լսած:
 իշի քացիցը բեգամաղ չեն ըլնի:
 հոց ու պանիր, կեր ու բանիր:
 երկաթը տաք տաք կը ծեծեն:



հաւ

հաւ կարգւած հավ.

հա հաւ:

ւ կարգւած վ:

ւ

հաւ,

նաւ, կաւ, կարաւ:

հաւը ջուր ա խմում, աստծուն ա մտիկ տալիս:

ձու ածան հաւը կը չկըջան կըլի:

շան կաղալուն մի հաւատար:

պառան իր թանին թթու չի ասիլ:

աստուած սարը կը տեսնի, ձինը կը գնի:

կառւին խաղ ա՛ մկանը մահ:

շատ անգամ հանաքը չանաք ա գառնում,

կուշտն անթուն մանար կը բրթէ:

մի մուկն օխտը կարաս ա մուռտառել:



է2

է է2:

է



աղւէս

աղւէս, աղւէս:

է

խաղ շատ գիտեմ, ամա ձէն չունիմ:

ինչ կասես, էն կը լսես:

կճուճը թօլ էլաւ, խուփը գտաւ:

անգը տես, կտաւն առ, մէրը տես, աղջիկն առ:

կատուի դունչը մտին չի հասաւ, ասեց էս օր ուրբաթ ա:


կեսուրդ մեռաւ, տեղդ լէնցաւ:

տարին մի գատիկ՝ էն էլ նաւակատիկ:

պաս ուտեմ, էն էլ թանէ սպաս:

տանուտէրի վկէն գզիրն է:

տասը չափի, մին կտրի:
 մարդի նամուսը գտակն ա, կնկանը լաջակը:
 շիտակախօս մարդի գտակը ծակ կըլի:
 ջրին չմտացած մի բոբկանալ:
 աշխարհքս գմակ ա, միջի մարդը դանակ:
 անճարը կերել ա բանջարը:
 կնիկ արմատի մազը երկէն կըլի, խեւքը կարճ:



Թև
 և կարգն եւ
 և


մինչեւ շուշանը զարգարեց, ժամերն արձակեց:
 խեւին խրատն ինչ անէ, սեւին սապօնն ինչ անէ:
 վերել թքեմ երեսս ա, ներքեւ թքեմ միրուքս ա:



Ոտք
 ոտք կարգն վտար:
 ո ոտք, ոտք:

Եօրդանիգ գեօրա ոտք մեկնիր:
 սատկած ձիու ես ման գալիս, որ նալը քաշես:
 էժը իր ոտիցը կախ կը տան, ոչխարը իր:

էն վաղ էր, որ էշը կալ էր:
 Տէնց բան ես ասում, որ էշը ախոռումը դուռմ ա:
 դրուստ խօսողին մի ձի, որ ասի ու փախչի:
 քամին ասեց մարագին, դուռդ բաց արա դարման տուն
 անեմ. ասեց՝ ոչ քու բերածը կուղեմ, ոչ քու տարածը:
 գեղի գլուխը որ հասնես, երեսիցը խաբար առ:



խոզ
 ո կարգն խօսքի մէջ օ:
 խօ խոզ:
 ո

ձուկը գլխիցը կը հօտի:
 զոնազը տան տիրոջ էջն ա:
 ուրիշի ձեռքով փուշ քաղի:
 մի ձեռքով ձմեռուկ չի բռնուիլ:
 ձին ու ջորին կուեցին, մէջտեղը էշը սատկեց:
 սոխ ու հաց սիրտը բաց:
 ուրագն իր կոթը չի տաշիլ:
 դրուստ խօսողի գտակը ծակ կըլի:
 գողն ինչ կուղի, մութ գիշեր:
 մեծ էջն ախոռումն ա մնացել:
 սառած օձն առաջ տաքացողին կը կծի:
 մուկը ծակը չէր մտնում, ցախաւելը պօջիցը կսպեցին:
 սպիտակ շունը բամբակ ծախողին վնաս ա:
 երազում սովածը հաց կը տեսնի, ծարաւը ջուր:
 ջրին չը մտացած մի բոբկանալ:
 մի ծաղկով գարունք չի դալ:
 ձուտը ձուռմը մանշուր կըլի, մանուկը օրօրոցումը:
 քոռի ինչ վէճն ա, թէ մուկը թանկ ա:
 գող սրտումը գող:

օխտը ծովից, մին կովից:
մեղքը լալով, պարտքը տալով:
ժամիցը ես եմ գալիս, ողորմի ասուած դու ես ասում:


վ գրից առաջ ո կարգւն օ:

ով չուտա, նա կուտ:
ով չուտա, փորը կուշտ,
ով ալարի, ոչ գալարի:

ո կարգւն խօսքի վերջը օ:

քո տունը չքանդւի:

գուռն ողորմութեան
գաւանդիս բաց,
գասեցն վերնօցն:



Հայլի
Հայլի, Հայլի:

այ

Հայի ետի խելքն իմն ընի:
էսպէս կարգւն 2 կամ 3 գիր ունեցող կարճ խօսքերը:
այ, հայ, վայ, չայ, թայ, զայ, փայ, էայ:

Հայ օրօն օրօն ծաղիկ:
կարմիր ու տօրսն ծաղիկ.
Հարսն ու աղջիկ մեծրել եմ,
որ գան ու քաղեն ծաղիկ:

այ լաւ մարդ: վայ ինձ: երկու ֆունա չայ բեր: Հինգ
թայ ապրանք կորաւ: մեր պանիրը զայ եղաւ: նրանք
մատնիները փայ արին: սահաթի եայը թուլցել է:

Հայլի խօսքի պէս էլի կարգւն
չայերը, թայերը, փայերը:
ձեր չայերը զայ եղած են: մեր փայերը շատ են: սահաթի
եայերը թուլցել են:

յ չեղածի պէս կարգւն մենակ

գայ, տայ, կայ, լայ 2 գիր ունեցող խօսքերի վերջը, ու-
րիշ խօսքով՝ գայ կարգւն գա:

Հաստ ու բարակ մի գին ա, վայ գայ բարակ մանողին:
մինչեւ տղան չլայ, մարը ծիծ չի տայ:
իմ խանութը քիչ ապրանք կայ:

յ չեղածի պէս կարգւն երկուսից աւել գիր ունեցող խօս-
քերի վերջը:
տղայ կարգւն տղա, սատանայ կարգւն սատանա:

այ տղայ, դու հուր ես՝ մուր ես,
ես ծարաւ եմ, դու ջուր ես,
մուղարլամ թաուլամ շոր ես,
համբարձում, գիշերն ուր ես:

բակը խաղում են վեց երեխայ: սատանայ ասուած բանը
չը կայ: նազիկի հէրը քահանայ է: ես վկայ եմ: ուս-
ները քրիստոնեայ են:

ամեն օր տէրտէրը գաթայ չի ուտիլ:

ա, ե, է, ի, ու, օ գրերի առաջ
յ կարգւն համարեա հ.
յունիս կարգւն հունիս:
յա, յե, յէ, յի, յու, յօ:

Հայր մեր, օր երկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ
արքայ . . .

յարմար ժամանակ չունիմ: զօրքը յաղթեց թշնամինե-
րին: մեր քաղաքը յաջորդ չունի: յուլիս ամսին կու-
գամ: յուսով եմ օր կուգաս: այս գիրքը յիշատակ թող:
4

յիսուսին խաչեցին: տղով կամ յղի կինը հիւանդ էր: նա կառքի ետեւն էր նստած: մեծ քարը յետ հրէ: յօժար կամքովս կերթամ:

ոյ կարգաւ ույ,
ոյժ կարգաւ ույժ.

ոյ.

գու շատ ոյժ ունիս: ձեռքդ ցոյց տուր:
այս տարի բոյս է լաւը: հաւի բոյնը հաւկիթ կայ:
խօսքի վերջը ոյ կարգաւ օ. յետոյ կարգաւ ինչպէս յետօ:
բանն արաւ յետոյ պարծեցիր: ես յետոյ կը դամ:
է, օ գրեթե վերջը յ կարգաւ հայ խօսքի պէս.

էյ, օյ.

բօյիդ բուսիդ մեռնեմ: չինար բօյիդ ես զուրբան:
էյ, ինչ ես անում: էյ, խեղքդ գլուխդ պահիր:

ջան իման, ջան իման,
չինար բօյիդ ես զուրբան.
ջան իման, ջան իման,
սեւ աչքերուդ ես զուրբան:

իւ կարգաւ իու, եթէ խօսքը կամ նորա կտորը ւ գրով չէ վերջանում.

իւր, իւղ:

յա բու թիւն, յարութիւն:
քա ջու թիւն, քաջութիւն:
խա չե լու թիւն, խաչելութիւն:

հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեցե՛տ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերօց պարտապանաց եւ մի տաներ զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ, զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

բզի գլխին բուռնցքով տալ չի ընիւ:
գեղի գլուխը որ համեստ, երեխիցը խաբար առ:
փորձած սատանան լաւ է, քան անփորձ հրեշտակը:
սերը սովորը կուտի, թանը մոլորը:
միրուք չունեմ, որ խօսքս անց կենայ:
բանն արա, յետոյ պարծեցիր:
գիլի գլխին աւետարան կարգացին, ասեց, թէ՛զ արա,
ոչխարը գնաց:
ձին ու ջորին կուեցին, մէջ տեղը էշը սատկեց:
քաջալը որ դեղ ունենայ, իր տաղ կատարին կանի:
քաջալը գեղ գիտենայ, իրան գլխուն կէնէ,
կո՞նու գլուխը խալիչեն կենալ չի:
խօզի գլուխը խալու վրան չի կենայ:
ամեն օր տատը գաթայ չի ուտիլ:
գողը գողէն գողացաւ, ասուած վերեւը զարմացաւ:
գանակը կովի կուշտը կը տանեն, ոչ թէ կովը գանակի:
երեխին բան գիր, հետը գնա:
իմաստունի հետ քար կրի, յիմարի հետ փլաւ մի ուտիլ:
ծառը որ վէր ընկնի, կացնաւորը կը շատանայ:
կուժ քեզ եմ ասում, կուլայ դու լի:
ձւի գողը ձիու գող կը գառնայ:
շան հետ աղպերացիր, փէտը ձեռիցդ վէր մի քցիլ:
շատ մի սիրիլ, ատել կայ, շատ մի ատիլ, սիրել կայ:
պանիր ու հաց, կերաւ գնաց:
սեւ կովը վէր ընկաւ, դանակաւորը շատացաւ:
փէտը վէր ունես, գող շունը կիմանայ:
օձը իր շապիկը կը փոխէ, բայց բնութիւնը չի փոխիլ:



Ազգ. Թուրք.		Ազգ. Թուրք.		Ազգ. Թուրք.		Ազգ. Թուրք.	
Ա	ա	Ի	ի	Յ	յ	Տ	տ
Բ	բ	Լ	լ	Ն	ն	Ր	ր
Գ	գ	Խ	խ	Շ	շ	Յ	ց
Դ	դ	Ծ	ծ	Ո	ո	Ի	ւ
Ե	ե	Կ	կ	Չ	չ	Փ	փ
Զ	զ	Հ	հ	Պ	պ	Ք	ք
Է	է	Ձ	ձ	Ջ	ղ	Օ	օ
Ը	ը	Ղ	ղ	Ռ	ռ	Ֆ	ֆ
Թ	թ	Ճ	ճ	Ս	ս		
Ժ	ժ	Մ	մ	Վ	վ		

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արգար
Առ իս լոյս ծագեա:

Բզխումն 'ի հօրէ,
Բզխեա 'ի հօգւոյս,
Բան քեզ 'ի հաճոյս:

Գանձք ողորմութեան
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս սոս:

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցս վերնոցն:

Երբեակ միութիւն
Ելելոց խնամող
Եւ ինձ ողորմեա:

Զարթիր Տէր յօգնել,
Զարթս գթմրեալս,
Զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն,
Էակից որդի
Է միշտ սուրբ հօգի:

Ընկալ զիս գթած,
Ընկալ ողորմած,
Ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց,
Թողութիւն տըւող
Թոյլ ինձ զյանցանս:

Ժողովող բարեաց,
Ժողովեա եւ զիս
Ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժշկութիւն:

Լէր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոցս:

Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա
Խորհուրդ լուսաւոր:

Ծընունդ հօր ծոցոյ,
Ծածկելոյս սուերաւ
Ծագեան լոյս փառաց:

Կենարար Փրկիչ,
Կեցն զմեռեալս,
Կանգնեա ըզվարեալս:

Հաստեան հաւատով,
Հաստատեան յուսով
Հիմնեցն սիրով:

Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատեմ,
Զիր բարեաց շնորհեան:

Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացն:

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց
Ճեպել 'ի յերկինս:

Միաձինդ հօր,
Մոյժ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեան զիս, Բրիստոս:

Նորոգող հնութեանց,
Նոշոգեա եւ զիս,
Նորոգ զարգարեա:

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զբաւութիւն,
Շնորհեա զթողութիւն:

Ուրախացն Տէր
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ 'ի սուգ:

Չար մըշակողին
Չար սերմանց նորին
Չորացն զպտուղն:

Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեան իմոց
Պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա աչացս,
Ջերմ հեղուլ զարտօսոր,
Ջնջել ըզյանցանս:

Ռեախնդ քաղցու,
Ռամ հօգւոյս արբոյ,
Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճմլեա
Սիրա իմ քարեղէն:

Վասն գթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցն:

Տենչալոյդ տեսլեամբ
Տնւր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:

Իիւծեալս մեղօք
Իիւծեալ աղաչեմ,
Իիւսել ինձ բարիս:

Բաբունդ երկնաւոր,
Բոտեա զաշակերտ
Բամից երկնայնոց:

Փրկիչ յանցանաց,
Փութա՛ զիս փրկել
Փորձութեանց մեղաց:

Յօղ արեան քոյ Տէր,
Յօղեա՛ ի հոգիս,
Յնժասցէ անձն իմ:

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզփառս:

Աստուածածնին բարեխօսութեամբ
յիշեա Տէր եւ ողորմեա:

Գրեց ներսէս կլայցի:

Փառք՝ ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն քեզ՝ ի բարձունս.
օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ
գովեմք զքեզ: Խոստովանիմք Տէր ըզքեզ եւ երկիր պագանեմք
քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն
մեծի փառաց քոց: . . .

Քրիստոս ՚ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունի հրաման տուաւ:

Այսօր տօն է ծննդեան, աւետիս.
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս:
Այսօր արեւն արգարութեան, աւետիս:
Երեւեցաւ ՚ի մէջ մարդկան աւետիս: . . .

Մովսէս Քերթով:

Քուն էղիր, պալաս, աչքըդ խուփ արա,
Նաշխուն աչքերուդ քուն թող զայ վըրայ:

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,
Իմ Արամիկիս քունը կը տանի:

Ոսկի խաչ վիզիդ՝ քեզի պահպան.
Նարօտ կապել է ծարէն տէր պապան.

Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ Արամիկիս քունը կը տանի: . . .

Ռ. Պատկանեան:

Հաւար Զուլօ, մաղաթ Զուլօ,
Մանի գեօրգում, եանդըմ Զուլօ,

Ես Զուլօն եմ Մաստարեցի,
Հինգ օր արթի մեր տուն կեցի,
Դէմ աղօթրան եկեղեցի:

Արեւն ելաւ կամար կամար,
Զուլօն կապեց ոսկէ քամար,
Քեզի բերեմ ջանիս համար: . . .

Բաժակներ առնունք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գլնով,
Կարմիր ու ճերմակ գլնին
Մեզ լինի անուշ համով:

Բերներիս տանենք անվախ,
Չէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտարէ եւ ոչ գլնի,
Խմենք մեզ անուշ լինի:

Արաքսայ ջրով ցօղած,
Հայոց արեւով հասած,
Հայոց աղջիկ է քաղեր
Քնքոյձ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին
Հայաստան անկաճ նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն:

Այս անուշ գինին խմողը
Սրտէն թող հանէ ոխը.
Ամենքս էլ ասենք ամէն,
Որ մեզի շատ տայ ամէն:

Ռ. Պ.

* * *

Հայոց ազնիւներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտքս էք գալիս, ասում եմ ես ան,
Հալուում եմ, հալուում օտարութեան մէջ,
Ախ, սիրաս խորվում, ցաւիս չի կայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակումս ածած
Սեղանիս վրայ առաջս է գրբած,
Աչքըս ակամայ վըրան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ եւ, ան, միտքս է մոլորում,
Դառն արտասունքով աչքըս պըղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհը մթնեց,
Արեւն էլ խաւարեց, էնդուր որ ախրեց: . . .

Գ. Միրիմանեանց:

* * *

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
Փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն,
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր,
Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ նըւիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
Այնպէս է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում, ասուածաւախ ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իւր վրայ գալած ժամանակը
Կտրիչ հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիվան-աշըգ,
Զի սպիտակիւր ամենեւին մէկ հերը մարդուն:

Ա. Զ.

* * *

ՄԵՆՅՈՒ ԵՐԳԸ:

Թորկեր եմ խեղճ, տկլոր զիմ ճժեր, զիմ տուն,
Կօլօրտիմ մէկ փշուր չոր խացի խամար,
Ըսկի չունիմ դադար, ըսկի չունիմ քուն,
Եօթ տարի է յինէ չունին մէկ խաբար:

Ձըմ գինայ թէ՛ մկայ ինչ ձուն տամ խալիս,
Կուրցեր եմ իմ աչեր, մացեր եմ լալիս,
Դուռըմ ըլէ չի բացւի իմ սեւ եղբալիս,
Ձէմլէ էն Կիկօն եմ անօթի, անձար:

Խայու խաւատ, խայու Ասուած, փրկէ զիս,
Ես չէ, ան իմ խոգին, ումըրէս զրկէ զիս,
Դիպա Մշու դաշտը իմ տուն խրկէ զիս,
Ճամբախս չիրիշկէ զիմ սէֆիլ նուպար:

* * *

Ով իւր ազգն ուրանայ, Կշտին դիպչի գեղարգը,
Երկու աչքով կուրանայ, Սրտիցը թափի լեարգը,
Յետնեալ աղքատի նման Դժ ոխքի բռնցկելիք
Դռնէ ի դուռ մուրանայ: Լինի ազգուրաց մարգը:

Կեղծ ու պատիր հնչողին,
Կատուի պէս մռնչողին
Ասուած աշխարհից ջնջէ
Հայ անունը ջնջողին:

Ա. Զ.

* * *

ՔԱՋ ԱՐԱՐՈՅԻ ԵՐԳԸ:

Գրող տանի քուրդ Աբոյին,
Ըսպաններ է ջոջ Ա.փոյին,
Իլլաջ մացեր Արաբոյին,
Չարթիր, լաօ, մըռնիմ քըզի:

Չուր երբ մնամ էլու դռներ,
Էրթամ գանիմ զիմ խեղճ գառներ,
Սուքեմ զիմ բաղչալի ծառներ,
Չարթիր, լաօ, մըռնիմ քըզի:

Սէֆիլ-շիվար մացած Հայեր,
Էղած անտէր բնաւեր հաւքեր,
Տէր, դու փրկէ, պահէ արթուն,
Չարթիր, լաօ, օգնէ Հայուն:

Ա. Բ.

* *

Կռունկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս,
Մի վազեր երամիդ, շուտով կու համիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Թողեր եմ ու եկեր մըլքերս ու այգիս,
Քանի որ ան կանեմ, կու քաղւի հոգիս,
Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ՚ի հոգիս,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս: . . .

Ա. Բ.

* *

ՏԱԼԻՈՐԻԿՅՈՒ ԿՏՐԻՃ:

Տալօրիկցի կտրիճ եմ խորթ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի սրդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ:

Իմ պապ ծնաւ զիս Պալու ծոց,
Ինձ ընկոյզ կսճմ եղաւ օրոց,
Տըկլոց ծնած, մեծցած տըկլոց,
Դէմ արեւու, սաստիկ հողմոց: . . .

Ա. Բ.

* *

Լ ՈՒՐԻԿ:

Առաւօտեան թընտիր մուխ,
Կլօր աչքեր ընքեր թուխ,
Աժիր Մուշն ու Բուլանուղ.
Լուրիկ, լուրիկ, լուրիկ, լուրիկ
Բարխէմ, լուրիկ, լուրիկ, լուրիկ:

Ա. Բ.

* *

«Ձ Ա Ն Ի Մ Ա Ն»:

Էլայ էրթիս, էրթիս տըփի,
Ձան իման, ջան իման,
Եարս տուն չէր, նստայ լացի,
Ձան իման, ջան իման,
Չինար բոյիդ ես զուրբան.
Ձան իման, ջան իման,
Սեւ աչքերուդ ես զուրբան: . . .

Ա. Բ.

* *

«ՏՈՒՆ ԱՐԻ»:

Էրթիկ էրթիկ բռնել ես,
Էրթիկայ տակին կռնել ես,
Տուն արի, տուն արի, տուն արի, եար,
Մթնել ա, տուն արի, անջիգեար եար,
Կանչում եմ, եար արի, եարալու եար,
Ձէն տւի, ձէնս չառար,
Մագեամ ընձէն ջորել ես:

Ա. Բ.

* *

Ձիմ գլխու ֆութէն կիտամ,
Դէ, խանա ծամ թերն 'ի ծովէն.
Հողորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանայ ծամ թերն 'ի ծովէն: . . .

* * *

«ՀԱՐԱՐԻՍԱՆ»:

Հաբրբան.—Եայլի բոլոր կանանց է,
Տունը մեզի ճանանց է,
Թափով Շամամը կանցէ.

Ջանէջան.—Իմ դարս քրդի այան չէ:

Հաբրբան.—Երկէն գոմը սալել եմ,
Ալ ձին մէջը կապել եմ,
Ալ ձին թնջ կանէ նալը,

Ջանէջան.—Սիրունն թնջ կանէ խալը: . . .

Ա. Բ.

* * *

«ՀՈՎ ԱՐԷՔ, ՍԱՐԵՐ ԶԱՆ»:

Հով արէք՝ սարեր ջան, հով արէք,
Իմ դարտին դարման արէք.

Մեռայ բաղը գնալէն,

Ջրերի հետ խաղալէն,

Ծառերին թուփ չը մնաց

Դարտիս դարման սնեւէն: . . .

Ա. Բ.

* * *

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ:

Նոր էր լուսացել: Միաչքանի մարդը պատահեց փո-
ղոցումը մի սապատողի (կուզեան) եւ ասաց.

—Պետրոս, այսօր ինչ վաղ ես բեռնաւորել:

—Այո, դեռ վաղ է քեզ համար,— պատասխանեց սա-
պատողը,— որովհետեւ դու քո մէկ լուսամուտն ես բաց
արել:

* * *

Մի ընտանիքի տւել էին . . . Ներս (մի վախիլ) մա-
կանունը (աւելորդ անունը): Մէկ օր այդ ընտանիքից մի
կին կանգնած էր փողոցում՝ ցիսի ափին եւ չէր սրտապըն-
դում դուրս գնալ միւս ափը: Այդ կողմից անցնում էր
մի Ռուս: Սա տեսնելով կնոջ դրուժիւնը՝ ասաց նորան.

—Ներս:—Չքի փիս հարեւանի (գրացի) անունը,—
ասաց կինը,—Ռուսը որտեղից գիտէր, թէ ես Ներսուհն
հարսն եմ:

* * *

Երկու ճանապարհորդ մի հաւ ունէին ուտելու: Մէկը
ասաց միւսին. «այս հաւը մեզ բաւական չէ, թող ով լաւ
երազ տեսնէ, նա ուտէ»: Այս ասողը քնեց, իսկ միւսը կե-
րաւ հաւը: Առաջինը, երբ զարթեց, ասաց. «զարմանալի
երազ տեսայ.—ինձ հրեշտակները տանում էին երկինքը»:
Հաւով կշտացածը ասաց. «ես էլ տեսայ քեզ, որ բարձրա-
նում էիր, եւ իմ մէջն ասացի.—նա էլ չի ցած գայ եւ
կերայ հաւը»:

* * *

Պառաւ շուտ շուտ ջրով լցնում էր ամանը եւ տա-
նում էր քահանայի մօտ, որ նա օրհնէր, որովհետեւ
ասում էր՝ թէ կատուի դուռնը դիպաւ այս կամ այն ամ-
նին: Վերջապէս քահանան ձանձրանալով՝ մէկ օր ասաց
պառաւին. «ինչի էսքան նեղացնում ես ինձ եւ համբե-
րութիւնից հանում: Գնա, բեր էստեղ քու կատուն, որ
օրհնեմ նորա դուռնը»:

* * *

Մէկը ներս մտաւ ժլատի (թամահարի) տունը եւ
տեսաւ, որ նա ձանձեր էր բռնում. վերջապէս նա մէկ
ձանձ բռնեց եւ գցեց շաքարամանը եւ խուփը ծածկեց:
Ներս մտնողը հարցրեց. ինչո՞ւ ես այդպէս անում:
—Իմանալու համար թէ ծառան չէ գողանում շա-
քարը, պատասխանեց ժլատը:

* * *

Քահանան մի գողի խոստովանեցնում էր. այդ միջոցին նա գողացաւ խոստովանացնողի ժամացոյցը (սհաթը): Գողութիւն արեւ ես, սրբի, — հարցնում էր քահանան, — քնչ ես գողացել:

— Մի սհաթ:

— Տար, տիրոջը յետ տուր:

— Չէ, դուն առ, Տէր հայր:

— Չէ, տիրոջը պէտք է տաս:

— Տիրոջը տւի, չառաւ, տէր հայր:

— Ուրեմն քեզ լինի:

* * *

Քահանան աշակերտին Հայր մերը կարգացրեց եւ այդ աղօթքի մասին հարցրեց. «սրտեղ է քո Հայրը»:

— Մարաքումն է, պատասխանեց աշակերտը:

* * *

— Դու երբ պէտք է հաղորդուես, — ասում էր տէրը ծառային, — յիմար, գնա, հաղորդուի, խոստովանիր:

— Ես քնչ պէտք է ասեմ, — հարցրեց ծառան:

— Ինչ որ քահանան կասէ քեզ, դուն էլ կրկնիր, ուրիշ ոչինչ:

Ծառան գնաց, չորքեց խոստովանացնողի առաջին:

— Ասա մեղայ Աստուծոյ, — ասում է քահանան:

— Ասա մեղայ Աստուծոյ, — ասում է խոստովանողը:

— Յիմար ես, քնչ է:

— Յիմար ես, քնչ է:

— Կորի, գնա:

— Կորի, գնա:

Քահանան հողաթափով խփեց նորա գլխին, իսկ ծառան էլ խփեց իւր արեխով (չարուխ) քահանայի գլխին:

— Էդ քնչ դժուար է եղել խոստովանելը, — ասում էր յետոյ ծառան իւր տիրոջը, — ինչո՞ւ առաջ չասացիր, որ թւանքս էլ հետս ամեն էի:

* * *

Յիմարը նայելով մի գեղեցիկ շինութեան վերայ՝ հարցրեց մօտից անցնողին. «էս տունն էստեղ է շինւած»:

* * *

Մօլլա Նասր-էդ-Գինին մի գիւղացի մի նապաստակ ընծայեց: Մօլլան լաւ հիւրասիրեց (պատիւ տւեց) նորան: Երկու օրից յետոյ մօլլայի տունը երկու ճանապարհորդ եկան:

— Դուք ո՞վ էք, — հարցրեց մօլլան:

— Մենք՝ քեզ համար նապաստակ բերողի գրացիներն ենք, — պատասխանեցին նոքա:

Մօլլան սոցա էլ պատուեց: Մի քանի օրից յետոյ կըրկին հիւրեր (ղօնաղներ) երեւեցան:

— Դուք ո՞վ էք, — հարցրեց մօլլան:

— Մենք՝ քեզ համար նապաստակ բերողի գրացիներն ենք:

— Ա՛հ, բարով եկաք, — ասաց մօլլան, եւ մէկ ամանի մէջ տաք ջուր լցնելով, դրեց հիւրերի առջեւը եւ ասաց.

— Էս էլ մեր նապաստակի ջրի ջուրն է:

Վ Ե Ր Զ Ի Ն Դ Ս Ս Ը:

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՖՐԱՆՍՍԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

(Ալֆոնս Գօլէի):

Այն առաւօտը շատ էի ուշացել ուսումնարան գնալու, եւ վախենում էի, որ վարժապետը կը յանդիմանէ: Ծատը նորա համար էի վախենում, որ մեր վարժապետ Համէլն ասել էր, թէ հարցումներ պիտի տայ մեզ քերականութեան դժուար տեղից, եւ ես մի խօսք չը գիտէի իմ դասից: Մի րոպէ մտածեցի դասից յետ մնալ եւ գնալ հանդերում վազվզել:

Եղանակը (հաւան) այնպէս տաք էր, օրը պարզ: Անտառից լսում էր թռչունների (հաւքերի) ճլըլոցը, եւ Պրուսացիք (նէմեցները) իրանց զինւորական կրթութիւններն (թեալիմ) էին անում: Այս ամենը դասիցս աւելի էր իմ սիրտը քաշում, բայց սրտիս ուզածը թողի եւ վազվազ գնացի վարժատուն:

Քաղաքական տան մօտով անցնելու ժամանակ տեսայ, որ մեծ բազմութիւն կանգնած է պատի մօտ, մի բան է

կարգում: Երկու տարի շարունակ այդ տեղից են եկել մեզ
ամեն տեսակ գէշ լուրեր. կարցրած պատերազմների համ-
բաւնէր, զինուորագրութեան հրաւերներ, կառավարու-
թեան օրէնքներ: Ես առանց կանգնելու մտածում էի ինձ
ու ինձ:

«Էլի ինչ կայ»:

Շտապ շտապ անցնելու ժամանակ վախտէր դարբինը,
որ իւր աշակերտի հետ կանգնած նոր կպցրած թղթի
առաջ՝ կարգում էր, ետեւիցս ճւաց.— «Ա՛յ աղայ, այդքան
մի շտապիր, ժամանակ ունեւ վարժատուն հասնելու»:

Կարծեցի, թէ վրաս խնդում է. եւ շունչս բերանս
մտայ վարժապետիս փոքրիկ բակը:

Ուրիշ անգամներ դասից առաջ այնպիսի մեծ իրար-
անցում էր լինում, որ մինչեւ փողոցն էր լսում. գրա-
սեղանները բացուում ու խփում էին, բոլոր աշակերտները
բարձր ձայնով սերտում էին իրանց դասերը ականջները
խփելով, որ աւելի լաւ սովորեն, եւ վարժապետը իւր
հաստ քանոնով շարունակ խփում էր սեղաններին.

«Քիչ սուս կացէք»:

Յոյսս այս իրարանցումի վրայ էի դրել, որ առանց
ուսուցչի աչքին երեւալու՝ գնամ տեղս նստեմ. բայց իմ
չար բախտից այդ օրը խաղաղութիւն էր՝ կիրակի առա-
ւօտայ պէս: Բայ պատուհանից տեսնում էի, որ ամեն
ընկերներս իրանց տեղերը նստած էին, եւ պտրոն Հա-
մէլը երկաթեայ սարսափելի քանոնը թեւի տակ՝ անց ու
դարձ էր անում գաստտան մէջ: Պէտք եղաւ դուռը բա-
նալ եւ այդպիսի հանգարտութեան մէջ ներս մտնել:
Մտածեցէք իմ ամօթն ու վախը:

Բայց ս՛չ. պ. Համէլը առանց բարկանալու նայեց վրաս
եւ շա ա հանգարտ ձայնով ասաց.

«Շուտ տեղդ գնա, փոքրիկ ֆրանց. քիչ մնաց առանց
քեզ էինք սկսում»:

Թռայ նստարանի վրայով ու մէկէն իրէկ նստայ գրա-
սեղանիս առաջ: Այն ժամանակ միայն, երբ ահիցս փոքր
ինչ ուշքի եկայ, տեսայ որ մեր ուսուցիչը հագեւ էր իւր
սիրուն կանաչ հալաւը, որ միայն վերատեսչի գալուն

կամ աշակերտներին պարգեւներ (իէշքեաշ) տալու օրերն
էր հագնում: Չորս դին մտիկ արի՛ տեսայ, որ բոլոր դա-
սատունը ամեն օրւայ պէս չէ երեւում: Բայց սրբան
մեծ եղաւ զարմանքս, երբ աչքս դարձրի գաստտան խոր-
քում դրած նստարանների վրայ, որ ուրիշ օրեր դա-
տարկ էին, իսկ այն օրը բռնւած էին գեղի մի քանի
ընակիչներից, որոնք մեզ պէս լուռ ու մունջ նստած էին.
Ծերունի Հաուզէրը՝ իւր եռանկիւնի (իւչգիւլի) գլխար-
կով, առաջւան քաղաքադետը, գործակալը, եւ ուրիշ
մարդիկ: Դոքա բոլորը տխուր էին երեւում: Հաուզէրը
բերել էր մի հին եւ կրծած այբբենարան, որ բաց էր
արել եւ ծնկների վրայ դրել. այբբենարանի վրայ դրած
էր նորա խոշոր ակնոցը (գեօզլուկը):

Երբ որ այս ամենը ես աչքս էի անցնում, տեսնեմ
պ. Համէլը բարձրացել էր իւր տեղից. եւ մի եւ նոյն հան-
գարտ ու ծանր ձայնով, որով ընդունել էր ինձ, ասաց մեզ

«Ո՛րդեակք» այսօր վերջին անգամ դաս եմ տալիս
ձեզ: Բերլինից (գերմանացոց մայրաքաղաքից) հրաման
եկաւ, որ սորանից ետեւ մէնակ գերմաներէն լեզուն սու-
վորեցնեն Ալգասի եւ Լօրէնի (ֆրանսացիներից առած
երկրների) վարժատներում: Նոր ուսուցիչը վաղը կը գայ:
Այսօր ձեր վերջին ֆրանսերէնի դասն է. խնդրեմ որ
լաւ լսէք:

Այս մի քանի խօսքերը տակն ու վրայ արին ինձ: Ա՛հ,
թշուառականներ, ահա ինչ էին կպցրել քաղաքատան
դռանը:

Ֆրանսերէնի վերջին դասս...
Իսկ ես հազիւ թէ փոքր ինչ գրել էի իմանում: Ու-
րեմն էլ ոչ մի ժամանակ սովորելու չեմ, սկսածս կիսատ
պիտի մնայ... Ինչպէս ինքս ինձ մեղադրում էի կոր-
ցրածս ժամանակիս, պակասած դասերիս համար, երբ
անտան էի գնում հաւ քերի բռներ գտնելու կամ գետի
վրայ սառուց էի խաղում: Իմ գրքերից, որ մի րօպէ՛ առաջ
այնպէս ձանձրայի էի համարում, այնպէս ծանր պիտի
լինէր ինձ բաժանելի: Ինչպէս եւ պ. Համէլը, երբ մը-
տածում էի, թէ էլ տեսնելու չեմ նօրան, մոռանում էի
նորա տւած պատիժները, քանոնով զարկածները:

հարգանքով շնորհակալ եմ ձեզ
5

Խեղճ մարդ:

Ի պատիւ այս վերջին դասի նա զարգարւել էր իւր
տօն օրւան գեղեցիկ հալաւով, եւ հիմի հասկանում էի,
թէ ինչի գիւղի ծերերը եկել ժողովել էին դաստան
մի անկիւնում (քօշէն), կարծես ուզում էին տսել: Թէ
ախոսում են, որ աւելի շատ անգամ չեն եկել այդ վար-
ժատունը: Մէկ էլ կարծես շնորհակալութիւն էին յայտ-
նում մեր ուսուցչին իւր քառասուն տարւան անարատ
ճառայութեան համար, եւ իրանց վերջին պարտքն էին
տալիս մայր հայրենիքին, որ ահա բաժանւում էր իրանցից:

Այսպիսի մտածմունքների մէջ էի, երբ, մին էլ տես-
նես, անունս ականջիս հասաւ: Դաս աւելու հերթն (տրէն)
ինձ էր եկել, ինչ տես պատրաստ էի տալու, որ կարա-
զանամ ուզածը բարձր ձայնով, առանց շփոթւելու եւ
անսխալ ասել ծայրէ ի ծայր. բայց արի տես, որ առա-
ջին տողի վրայ մնացի եւ սկսայ կանգնած տեղս այս ու
այն կողմը օրօր-իլ: Սիրտս լցւած էր, չը համարձակեցայ
գլուխս բարձրացնել:

«Ես քեզ չեմ յանդիմանիլ, փոքրիկ ֆրանց, ասաց
պ. Համէլը, այդ բաւական պատիժ պիտի լինի քեզ հա-
մար. . . այդպէս է միշտ: Ամեն օր ասում ենք մեզ ու մեզ.
է՛հ, ժամանակ շատ ունիմ, վաղը կը սովորիմ: Հիմի տես-
նում ես, բանը որ տեղ է հասել. . . Ա՛խ, մեր Ալգասի մեծ
անբախտութիւնն այն է եղել, որ իւր կրթութեան (ուս-
ման) գործը միշտ վաղւան է թողել: Հիմի այդ մարդիկը
(գերմանացիք) իրաւունք ունին ասելու մեզ. ինչպէս, դուք
պնդում էիք, թէ ֆրանսիացի էք, եւ ո՛չ խօսիլ ու ո՛չ գը-
րել էք իմանում ձեր լեզուով: . .

Չէ, իմ խեղճ ֆրանց, դու գեռ ամենից յանցաւորը
չես. ամէնքս էլ մի մի բան ունինք մեզ մեղադրելու:

«Ձեր ծնողքը բաւական հոգս չեն տարել ձեր կըր-
թութեան վրայ: Նոքա աւելի լաւ էին համարում ուղար-
կել ձեզ հող մշակելու (վարել-ցանելու) կամ գործարանի
մէջ (Փաբրիկի մէջ) աշխատելու, որ մի քիչ փող աւելի
շահին: Ես ինքս միթէ ոչինչ մեղադրելու բան չունիմ.
Քանի անգամ արձակել եմ ձեզ ուսումնարանից, երբ կա-
մենում էի ձուկ բռնելու գնալ» . . .

Այսպէս մէկ խօսքից միւսը անցնելով՝ պ. Համէլը
սկսաւ խօսիլ ֆրանսերէն լեզւի վրայ, ասելով թէ՛ նա
աշխարհի ամենից գեղեցիկ, ամենից պարզ եւ ամենից
հաստատուն լեզուն է. թէ մենք պէտք է պահպանենք
այդ լեզուն եւ ոչ մի ժամանակ չը մոռանանք նորան:
Յետոյ վերցրեց մի քերականութիւն. եւ պատմեց մեր
դասը: Ինքս ինձ վրայ զարմանում էի, թէ ինչպէս լաւ եմ
հասկանում. նորա բոլոր ասածները այնպէս հեշտ, այն-
պէս լաւ հասկանալի էին երեւում ինձ: Ինձ թւում էր
նոյնպէս, թէ ես սչ մի ժամանակ այդքան միտք չէի
դարձրել եւ թէ վարժապետն էլ ո՛չ մի օր այդքան համ-
բերութիւնով չէր հասկացրել մեզ մեր դասը:

Ասես թէ մեզանից բաժնեւելուց առաջ խեղճ մարդը
կամենում էր տալ մեզ իւր բոլոր գիտեցածը, միանգա-
մից մտցնել մեր գլուխը իւր բոլոր իմաստութիւնը:

Լեզւի դասից ետեւ անցանք գրութեան: Այդ օրւան
համար պ. Համէլը պատրաստել էր բոլորովին նոր օրի-
նակներ նրանց վրայ գեղեցիկ խոշոր գրերով գրած էր,
ՅՐԱՆՄԻՍ, ԱԼԶԱՍ, ՅՐԱՆՄԻՍ, ԱԼԶԱՍ: Այդ օրինակները, որ
մեր գրասեղանների լաբերի վրայ կախ էին արած, կար-
ծես փոքր գրօշակների (բայրաղների) նման թրթռում էին
դասատան չորս կողմը: Պէտք էր տեսնել, թէ բոլորն էլ
ինչ ջանք էին թափում, եւ ինչ հանգարտ էր դասա-
տունը. ոչինչ չէր լւում, գրիչների խղիւղոցից աւելի
Մի բոպէ եղաւ որ բղէզներ մտան դասատուն. բայց ոչ ոք
ուշք չը դարձրեց, եւ ոչ էլ մինչեւ անգամ ամենից փո-
քրերը, որոնք աշխատում էին իրանց նալի պէս գրերը
այնպէս սրտանց քաշել, որ կարծես այդ էլ ֆրանսերէն
լեզւի դաս լինէր . . .

Վարժատան կողմի (երգիլքի) վրայ աղանիները ցած
ձայնով ղոճնղոճնում էին, եւ ես ասում էի ինձ ու ինձ,
նոցա ձայնը լսելով.

«Արդեօք դօցմ էլ պիտի ստիպեն գերմաներէն երգել»:
Մի մի անգամ աչքերս բարձրացնելով տետրակի վրա-
ից տեսնում էի, որ պ. Համէլը անշարժ նստած էր իւր
բարձր տեղը եւ այնպէս նայում էր իւր չորս կողմը եղած
բաներին, որ կարծես թէ ամբողջ (սաղ) ուսումնարանը
կամենար հեռը տանել. . . Մտածեցէք, քառասուն տարի
միշտ այդ միեւնոյն տեղում նա նստած էր, գէմուդէմը
միեւնոյն բակը եւ միեւնոյն դասատունը: Միայն նստա-

x պիտի մարտ

րանները, գրասեղանները շատ բանեցնելուց գոյները փոխել, հնացել էին. բակի ընկուզենիքը մեծացել էին եւ գայլուկը, որ ինքն էր տնկել, հիմի գարդարում էր պատուհանները եւ մինչեւ կտուրն էր հասնում: Ինչ ծանր պիտի թւէր այս խեղճ մարդուն բաժանելի այդ ամեն բաներից եւ լսել, թէ ինչպէս վերեւի յարկում (ղաթում) գնում գալիս էր իւր քոյրը, որ մեղուկները կողպելու վրայ էր. որովհետեւ միւս օրը պէտք է բոլորովին հեռանային երկրից:

Սրանով մէկ տեղ պ. Համէլը այնքան սիրտ արաւ, որ իւր դասը շարունակեց մինչեւ վերջը: Գրութիւնից յետոյ պատմութեան դաս ունեցանք, յետոյ փոքրերը երգեցին իրար հետ իրանց բա բէ բին: Դասատան անկիւնում ծերունի Հաուզէրը գրել էր իւր ակնոցը (գետլուկը), եւ այբբենարանը երկու ձեռքով բռնելով կապում էր գրերը փոքրերի հետ:

Երեւում էր որ նա էլ ջանք էր անում. նորա ձայնը դուրում էր սրտի ելնելուց, եւ այնպէս չտեսնւած բան էր նորան լսելը, որ մեր բոլորի ծիծաղն ու լացը գալիս էր: Ախ, ոչ մի ժամանակ չեմ մոռանալ այն վերջին դասը...

Մին էլ տեսնես եկեղեցու ժամացոյցը (սահաթը) սաս. ներկուօր խփեց, յետոյ աղօթքի գանգալը լսեց: Սիւննոյն րոպէին պրուսիացիք (գերմանացիք) կրթութիւնից (թալիմից) ետ դառնալով իրանց փողերը (մուզիկը) անում էին (չալում էին) մեր պատուհանների տակ... 9. Համէլը գունատ թափուած ոտի կանգնեց իւր բարձր տեղի վրայ: Ոչ մի օր նա այնպէս մեծ չէր երեւացել ինձ:

«Բարեկամք, ասաց նա, բարեկամք. ես... ես...»
 Բայց մի բան խեղդում էր նորան. չէր կարողանում խօսքը վերջացնել:

Դարձաւ գրատախտակին (գրելու տախտակին), վերջրեց մի կտոր կաւիճ (թեպալաշիւր) եւ օրքան օյժ ունէր մատներումը՝ պարզ ու խոշոր գրերով գրեց. «ԿԵՅՅԷ՝ ՅՐԱՆՍԻԱՆ»:

Յետոյ անշարժ մնաց իւր տեղը, գլուխը պատին գէժ տալով, եւ առանց խօսելու ձեռքով նշան արաւ մեզ:
 «Վերջացաւ... գնացէք»:

(Թարգմ. «Արձագանք»ի):
 ԱԵՏ. ԼԵՆԻՆՍԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 ԳՅ. ՈչՅՈ. ԵՄԲԼՈՒՄԵՆ
 1967

2013 189

« Ազգային գրադարան



NL0057579

